ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Աժ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-249-31.01.2018,07.02.2018-ՊԻՄԻ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել փոփոխություն՝ սահմանելով, որ Անվտանգության խորհուրդը վարչապետի առաջարկությամբ ոչ թե կարող է քննարկել, այլ քննարկում է Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և սահմանների անձեռնմխելիությանը վերաբերող հարցեր:	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
2.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է օրենքի նախագծի 4-րդ հոդվածում կատարել լրացում՝ սահմանելով, որ Անվտանգության խորհրդի նիստերը վարում է վարչապետը:	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
3.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 9-րդ մաս	Առաջարկվում է օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 9-րդ մասում կատարել լրացում՝ սահմանելով, որ Անվտանգության խորհրդի անդամներն իրավասու են առաջարկություններ ներկայացնել ինչպես Անվտանգության խորհրդի նիստի օրակարգի, այնպես էլ քննարկվելիք փաստաթղթերի վերաբերյալ:	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**

4.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել՝ ամրագրելով, որ Անվտանգության խորհրդի բոլոր որոշումները ստորագրում է միայն վարչապետը:	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
5.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ	Առաջարկվում է օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը խմբագրել՝ «պետական կառավարման համակարգի» բառերը փոխարինելով «գործադիր իշխանության» բառերով:	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
6.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 15-րդ մաս, 7-րդ հոդվածի վերնագիր, 2-րդ և 3-րդ մասեր, 4-րդ մասի 4-րդ կետ, 9-րդ հոդվածի վերնագիր և 3-րդ մաս	Առաջարկվում է օրենքի նախագիծը խմբագրել՝ «քարտուղարություն» բառը փոխարինելով «գրասենյակ» բառով: Փոփոխությունը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտի բարեփոխումներով և իրավական ակտերում օգտագործվող եզրույթների միասնականությունն ապահովելու անհրաժեշտությամբ:	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է:**